



"ՍՕՍ-ԱՈՒԴԻՏ" ՍՊԸ

"SOS-AUDIT" LTD

Անկախ աուդիտորական եզրակացություն № 05

«Գարանտ-Լիմենա» Փակ բաժնետիրական ընկերության 2009թ.

ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ:

*Ներկայացվում է «Գարանտ-Լիմենա» Փակ բաժնետիրական ընկերության
ղեկավարությանը*


Մենք աուդիտի ենք ենթարկել «Գարանտ-Լիմենա» Փակ բաժնետիրական ընկերության կից հաշվապահական հաշվեկշիռը՝ 31.12.2009թ. դրությամբ, ինչպես նաև հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական հոսքերի մասին հաշվետվությունները: Նշված ֆինանսական հաշվետվությունների կազմման համար պատասխանատվությունը կրում է «Գարանտ-Լիմենա» Փակ բաժնետիրական ընկերության ղեկավարությունը: Մեր պարտականությունն է իրականացված աուդիտի արդյունքում արտահայտել կարծիք նշված հաշվետվությունների վերաբերյալ:

Մեր կողմից աուդիտը անցկացվել է ՀՀ Կառավարության 21.04.2005թ. թիվ 509-Ն որոշմամբ հաստատված աուդիտի ստանդարտներին համապատասխան: Այդ ստանդարտներով պահանջվում է աուդիտը պլանավորել և իրականացնել՝ ֆինանսական հաշվետվություններն էական խեղաթյուրումներից զերծ լինելու վերաբերյալ ողջամիտ երաշխիքներ ձեռք բերելու նպատակով: Աուդիտորական աշխատանքները ներառում են ֆինանսական հաշվետվություններում արտացոլված տեղեկատվության և բացահայտումների հիմքերի հետազոտումը՝ թեսթային հիմունքներով: Աուդիտորական աշխատանքները ներառում են նաև ֆինանսական հաշվետվությունների կազմման ժամանակ կիրառված հաշվապահական հաշվառման սկզբունքների, ընկերության ղեկավարության կողմից կատարված էական գնահատումների և ֆինանսական հաշվետվությունների ներկայացման գնահատումը:


Մենք գտնում ենք, որ իրականացված աուդիտորական աշխատանքների արդյունքները բավարար հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Մեր կարծիքով «Գարանտ-Լիմեդ» Փակ բաժնետիրական ընկերության ֆինանսական հաշվետվությունները տալիս են 31.12.2009թ. դրությամբ ընկերության ֆինանսական վիճակի, ինչպես նաև հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական արդյունքների և դրամական հոսքերի մասին ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն Հայաստանի Հանրապետությունում ապահովագրական գործունեության ոլորտը կարգավորող իրավական նորմատիվ ակտերի պահանջների:

24 փետրվարի 2010թ.
ՍՕՍ-Աուդիտ ՍՊԸ


Մանվել Ղազարյան
Տնօրեն




Գևել Խաչատրյան
Աուդիտոր